Դ4-28

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԼԲԵՐՏ ԿԱՐԵՆԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

# ՆԱՎԹԸ ԵՎ ԻՐԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 1954-1979ԹԹ.

Է.00.02_«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

Ատենադպրի պրոֆեսոր
Հ. Հ. Հովհաննիսյանի՝
Լավագույն բարեմաղթանքով։

ԵՐԵՎԱՆ - 2007

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ստամբոլցյան Ա.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Բայբուրդյան Վ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու

Իսկանդարյան Գ. Մ.

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական

համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. հունիսի 8-ին ժ. 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007թ. մայիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

պատմական գիտությունների թեկնածու՝ Շաքարյան Ա.Կ.

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻԾ

## 1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1954-1979թթ. Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումների վրա նավթի ազդեցության ուսումնասիրությունը ունի ինչպես գիտական արդիականություն, այնպես էլ քաղաքական կարևորություն:

Այս շրջանում Միջազգային նավթային կոնսորցիումի (ՄՆԿ) անդամ արևմտյան խոշոր նավթային մոնոպոլիաների ու նրանց կառավարությունների և Իրանի ղեկավար շրջանների վարած քաղաքականության լուսաբանումը պայմանավորված է Իրանի տնտեսական և քաղաքական զարգացումների վրա նավթի ազդեցության նշանակության բազմակողմանի վերլուծության անհրաժեշտությամբ:

Հիշյալ ժամանակաշրջանում Իրանի տնտեսական և քաղաքական զարգացումների դիտարկումը նավթի հետ կապված խնդիրների տեսանկյունից առավել կարևորվում է այն առումով, որ նավթը դարձել էր երկրի տնտեսության հիմքը, իսկ սոցիալական և քաղաքական զարգացումները սերտորեն առնչվում էին նավթային խնդիրների հետ:

Նավթի գործոնը հատուկ նշանակություն ունեցավ 1978-1979թթ. Իրանի իսլամական հեղափոխության նախադրյալների ձևավորման համար: 1973թ. հետո աննախադեպ նավթային եկամուտների պայմաններում Մոհամմեդ Ռեզա շահի վարած քաղաքականության սկզբունքների և հետևանքների մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համապարփակ և ավելի խորն ընկալել նավթի դերը երկրում հեղափոխական իրադրության ստեղծման պատճառների համակարգում:

Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից և ԻԻՀ-ի հաստատումից հետո նրա ղեկավարների կողմից շահի վարչակարգի նավթային քաղաքականության սկզբունքների մերժումը կարևոր նշանակություն ունեցավ երկրի և ժողովրդի շահերին

առավել չափով համապատասխանող սեփական նավթային քաղաքականության մշակման, նրա ուղղվածության ճշգրտման և նրա իրականացման առավել նպատակահարմար ձևերի ընտրության գործում:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է 1954-1979թթ. Իրանի նավթի հետ կապված խնդիրների համալիր և համակողմանի լուսաբանման անհրաժեշտությամբ, որի իրականացման համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Բացահայտել ուսումնասիրվող շրջանում ՄՆԿ-ի գործունեության առանձնահատկություններն Իրանում և նրա հետապնդած նպատակներն ու շահերը:
- Լուսաբանել Իրանի կառավարությունների նավթային քաղաքականության էվոլյուցիան 1950-1970թթ:
- Ներկայացնել Իրանի գործունեությունը ՕՊԵԿ-ի շրջանակներում և հարաբերությունները Պարսից Ծոցի այլ նավթարդյունաբերող երկրների հետ:
- Քննության ենթարկել նավթի ազդեցության մեծացումը Իրանի ներքին և արտաքին քաղաքականության ուղղվածության վրա:
- Վեր հանել նավթային եկամուտների նշանակությունը Իրանի տնտեսական զարգացման և երկրի միջազգային հեղինակության բարձրացման գործընթացում:
- Բացահայտել նավթի ազդեցության ներգործությունը երկրում հեղափոխական իրադրության ձևավորման վրա:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Թեև Իրանի նավթի հետ առնչվող առանձին խնդիրներ քննարկվել են Հ.Կ. Թրյանի, Վ. Ա. Բայբուրդյանի, Ն. Հ. Հովհաննիսյանի, Ա. Հ. Ստամբոլցյանի, Ա.Ջ. Արաբաջյանի, Ա.Ե. Պրիմակովի, , Հ. Օ'Կոնորի, Ս.Հ. Լոնգրիգի, Մ. Ֆաթեհի և այլոց



աշխատություններում և գիտական հոդվածներում, սակայն 1954-1979թթ. Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումների վրա նավթի ազդեցությունը մեզանում առ այսօր չի դարձել ամբողջական և համալիր գիտական ուսումնասիրության առարկա:

Սույն աշխատանքն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում ընդարձակ փաստագրական նյութի, ինչպես նաև տարբեր լեզուներով սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների լայն օգտագործմամբ համակողմանիորեն լուսաբանել տվյալ ժամանակաշրջանում Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի վրա նավթի ազդեցության ամենատարբեր առանձնահատկություններն ու դրանց դրսևորումները:

## 4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրությունն ընդգրկում է 1954-1979 թվականները՝ Միջազգային նավթային կոնսորցիումի ստեղծումից մինչև Իրանի իսլամական հեղափոխությունն ընկած շրջանը: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է ՄՆԿ-ի ստեղծումից հետո Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում նավթի նշանակության առավել մեծացման հետ: Վերոնշյալ շրջանում ձևավորվեցին Իրանի նավթային քաղաքականության սկզբունքները և արտաքին քաղաքականության նոր ուղղվածությունը, որոնք որոշեցին երկրի զարգացման հետագա ընթացքը: 1973թ. նավթային բումը միանգամայն նոր իրավիճակ ստեղծեց ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքում, իսկ նավթի գների կտրուկ աճը որոշեց շահական վարչակարգի նոր տնտեսա-քաղաքական կուրսը և երկրի հետագա ճակատագիրը:

## 5. ԱՍԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը 1954-1979թթ. ընկած ժամանակահատվածում արևմտյան նավթային խոշոր ընկերությունների և նրանց կառավարությունների, ինչպես նաև շահական վարչակարգի վարած

քաղաքականության, նրա նախադրյալների, այն պայմանավորող հիմնական գործոնների և նպատակների հետ կապված տեսակետերի ու հարցադրումների քննական մեկնությունն է և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

## 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ոչ միայն Իրանի, այլև մյուս նավթարդյունաբերող երկրների քաղաքականության ամբողջական ընկալման և գնահատման համար: Այն նաև թույլ կտա ավելի ճիշտ ըմբռնել նավթի ազդեցության առանձնահատկությունները շահական վարչակարգի քաղաքականության և երկրի տնտեսա-քաղաքական զարգացումների վրա: Աշխատության եզրահանգումները կարող են օգտագործվել նաև Իրանի պատմությանը նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում:

## 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և նախնական հավանության է արժանացել ԵՊՀ-ի Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության բաժնում: Նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, Երիտասարդ արևելագետների XXVI և XXVII հանրապետական գիտաժողովներում: Ատենախոսության վերաբերյալ հեղինակի հրատարակած հիմնադրույթների և հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

## 8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում արծարծվող հիմնախնդիրների քննության տեսակետից չափազանց կարևոր են իրանական նավթի նկատմամբ մեծ շահագրգռություն ունեցող ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի արխիվային նյութերը, որոնք միայն վերջերս են հրապարակվել: Դրանք մանրամասն ու հավաստի տեղեկություններ են տրամադրում մեզ հետաքրքրող խնդիրների վերաբերյալ, մասնավորաբար, ԱՄՆ-ի



Պետդեպարտամենտի բարձրաստիճան պաշտոնյաների՝ իրենց երկրի նախագահի ազգային անվտանգության, տնտեսական և արտաքին գործերի գծով օգնականներին հղած տեղեկատվությունը[1]:

Սկսած 1954թ. և հատկապես 1970-ական թթ. նավթից ստացած եկամուտների, երկրի ընդհանուր եկամուտների ու ներմուծման չափերի, ինչպես նաև տնտեսական զարգացման մասին հավաստի տվյալների լուսաբանմանը մեծապես նպաստել են օգտագործված վիճակագրական աղբյուրները[2]:

Տվյալ ժամանակաշրջանում Իրանի տնտեսա-քաղաքական կյանքի շատ հարցեր հանգամանորեն քննարկվել են Հ. Թրյանի, Ն. Հովհաննիսյանի, Վ. Բայբուրդյանի, Ա. Ստամբոլցյանի և Գ. Իսկանդարյանի ուսումնասիրություններում, որոնք մեծ չափով նպաստել են մեր առջև դրված հիմնախնդիրների բազմակողմանի լուսաբանմանը[3]:

Ատենախոսությունը շարադրելիս լայնորեն օգտագործել ենք խորհրդային հետազոտողների՝ մեզ հետաքրքրող խնդիրներին վերաբերող մենագրությունները, կոլեկտիվ հրատարակությունները և հոդվածները, որոնցում առկա է հարուստ փաստագրական նյութ և հարցերի հանգամանալի վերլուծություն: Հարկ է հիշատակել հատկապես Ս. Ալիևի, Ռ. Անդրեասյանի, Ա. Էլյանովի, Ա. Կազյուկովի,

---

[1] Memorandum From the President's Assistant for International Economic Affairs (Flanigan) to the President's Assistant for National Security Affairs (Kissinger), Washington, January 10, 1970/ http://www.state.gov/r/pa/ho/frus/nixon/e4/65031.htm
Memorandum From Harold Saunders of the National Security Council Staff to the Presiden's Assistant for National Security Affairs (Kissinger), Washington., September. 11, 1969/ http://www.state.gov/r/pa/ho/frus/nixon/e4/65012.htm
Memorandum From the State Secretary to the President's Assistant for International Economic Affairs and President's Assistant for National Security Affairs, Washington, January 10, 1970/ http://www.state.gov/r/pa/ho/frus/nixon/e4/65082.htm
Intelligence Note 361, May 9, 1969, US Department of State, from INR L. Thomas Hughes to the Secretary, Iran: Showdown in Negotiations with the Oil Consortium is imminent.

[2] Document on US-Iran Joint Commision, Washington D.C., March 4, 1975, Joint Communique, The Middle East Journal, vol. 29, No.2, 1975, US Department of Defence Annual Report. Fiscal Year 1979, Febr. 2, 1978. Wash., 1978, OPEC Bulletin, No. 7, 1975-1976, UN Bureau of Statitics, www.unstats.un.org, Central Bank of Iran, www.cbi.ir,
Energy Information Administration, Official Energy Statitics from the U.S. Government, www.doe.gov/emeu/cabs/aomc/overview

[3] Թրյան Հ.Կ., Պայքար նավթի համար, Եր., 1957, Ն. Հովհաննիսյան, Իրան: Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Եր. 2004, Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Եր., 2005, Стамболцян А., Внутренняя политика правительства национальной буржуазии Ирана (1951-1953гг), Ер., 1984, Իսկանդարյան Գ., ԱՄՆ-ի դիրքորոշումն անգլո-իրանական նավթային վեճի հարցում, Արևելք, 2001:

Յու. Երշովի, Գ. Շիրոկովի, Ռ. Բորոնովի, Ի. Պալյուկայտիսի և այլոց ուսումնասիրությունները[4]:

Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման տարբեր փուլերի վրա նավթի ազդեցության վերաբերյալ բազմաբնույթ ու ընդարձակ տեղեկություններ են տրամադրում արևմտյան պատմաբանները: Ուշադրության արժանի են հատկապես Լ. Էլվելլ-Սատտոնի, Կ. Տյուգենդհատի և Ա. Համիլտոնի, Մ. Բախաշի, Ժ. Շեվալյեի, Ռ. Էնգլերի, Չ. Իսավիի, Ջ. Պետերսոնի, Ա. Սամփսոնի, Բ. Շվաղրանի, Ռ. Ստոբաուի, Ե. Քեդուրիի, Նիկկի Ռ. Քեդիի, Մ. Զոնիսի և այլոց աշխատությունները[5]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Իրանի նավթի և սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումների միջև եղած կապը ճշգրիտ պատկերացնելու հարցում առանձնակի կարևորություն են ներկայացնում իրանական հեղինակներ Ֆ. Ֆեշարաղիի, Հ. Մողթադերի, Ռ. Ռամազանիի, Ն. Ֆաթեմիի, Ֆ. Ռուհանիի, Մ. Ֆաթեհի, Մ. Քաշֆիի, Մ. Ֆարմանֆարմայանի և այլոց ուսումնասիրությունները[6]:

---

[4] Алиев С.М., Нефть и общественно- политическое развитие Ирана в xx в., М., 1985, Андреасян Р.Н., Эльянов А.Я., Ближний Восток. Нефть и независимость, М., 1961, Андреасян Р.Н., Казюков А.Д., ОПЕК. В мире нефти., М., 1978, Ершов Ю.А., Сырье, топливо, политика, М., 1975, Широков Г.К., Нефтедоллары и социально – экономическое развитие стран Ближнего и Среднего Востока, М., 1979, Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, М., 1977, Палюкайтис И.И., Экономическое развитие Ирана, М., 1965.

[5] Elwell – Sutton L.P., Persian oil, L., 1955, Tugendhat K., Hamilton A., Oil the Biggest Business, L., 1975, Bakhash S., The Politics of Oil and Revolutionary Iran, W, 1982, Шевалье Ж.М, Нефтяной кризиз, М., 1975, Engler R., The politics of Oil, Ch., 1969, Issawi Ch., Yeganeh M., The Economics of Middle Eastern Oil., N.Y., 1962, Peterson J.E., The politics of Middle Eastern oil, W., 1983, Sampson A., The Seven Sisters. The Great Oil Companies and the World they Shaped, N.Y., 1975, Shwadran B., The Middle East. Oil and the Great Powers, N.Y., 1959, Stobaugh R., The Evolution of Iranian Oil Policy, 1925-1975, Iran Under The Pahlavis, Stanford, 1978, Kedouri E., Haim S., Towards a modern Iran, L., 1980, Nikki R. Keddie, Modern Iran. Roots and Results of Revolution, New Haven-L., 1981, Zonis M., The political Elite of Iran, N.J.,1976.

[6] Fesharaki F., Development of the Iranian Oil Industry: International and Domestic Aspects, N.Y., 1976, Moghtader H., The impact of increased oil revenue on Iran's economic development 1973-1976, Kedouri E., Haim S., Towards a modern Iran, L., 1980, Ramazani R.K., The US and Iran. The Patterns of Influence. N.Y., 1982, Fatemi N.S., Oil Diplomacy, N.Y., 1954,
روهاني ف، تاريخ مللي شدن صنعت نفت ايران، -تهرآن، 1973
فاتح م ،پنجاه سال نفت ايران، -تهرآن1374
كاشفي م.، سير تحول صنعت نفت در ايران و خاور ميانه، تهران، **1981**
منوچر فرمانفرمائيان و رحسان فرمانفرمائيان، خون و نفت، خاطرات يك شاهزاده ايران، تهران،1378



Ուսումնասիրվող թեմային վերաբերող բազմաթիվ արժեքավոր նյութեր և տվյալներ են պարունակում մեր կողմից լայնորեն օգտագործված բազմալեզու պարբերականները[7]:

Հարկ է նշել, որ հիշատակված թե՛ արևմտյան և թե՛ իրանցի հեղինակները նույն հարցերի վերաբերյալ հաճախ ցուցաբերում են տարբեր, երբեմն նույնիսկ միանգամայն հակադիր մոտեցումներ, ինչը պայմանավորված է նրանց քաղաքական կողմնորոշումների և տեսակետերի տարբերությամբ:

## 9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է առաջաբանից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից) եզրափակումից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ԱՌԱՋԱԲԱՆԻ մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակներն ու դրույթները, գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 1950-ԱԿԱՆ ԹԹ» անդրադառնում է Իրանի նավթարդյունաբերության ձևավորմանը, Միջազգային նավթային կոնսորցիումի ստեղծման հանգամանքներին և նրա գործունեությանը 1950-ական թթ., երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում նավթարդյունաբերության նշանակության աստիճանաբար աճին: Մանրամասնորեն քննարկվում են Իրանում ՄՆԿ-ի գործունեության սկզբից արևմտյան պետությունների, մասնավորապես ԱՄՆ-ի, քաղաքականության ամրապնդման և երկրի կառավարության նավթային քաղաքականության ձևավորման հանգամանքներն ու առանձնահատկությունները:

---

[7] Азия и Африка сегодня, Международная жизнь, Мировая экономика и международные отношения, Новое Время, Foreign Affairs, Forign Policy, Iran Oil Journal, Kayhan International, Middle Eastern Affairs, Petroleum Intelligence Weekly, The Middle East Journal, آيندكان, آطلاعات, تهرآن اكنوميست, كيهان.

Գլխի առաջին ենթաբաժնում՝ «Իրանի նավթարդյունաբերության հիմնումը և նրա հետագա ազդեցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքի ձևավորման վրա», լուսաբանվում է անգլիացի խոշոր գործարար Դ.Արսիի կողմից Իրանի շահից կոնցեսիայի ձեռքբերման հետևանքով երկրում Անգլո-պարսկական նավթային ընկերության (ԱՊՆԸ), (որը 1935թ. վերանվանվեց Անգլո-իրանական նավթային ընկերության (ԱԻՆԸ)), հիմնումը, որից հետո Անգլիան սկսում է Իրանի տնտեսա-քաղաքական կյանքում մեծ դերակատարություն ունենալ:

Առաջին աշխարհամարտի նախօրեին Անգլիայի ռազմական նավատորմիղի քարածուխից նավթի օգտագործմանն անցնելու հետևանքով ԱՊՆԸ-ը ռազմավարական մեծ նշանակություն ձեռք բերեց Անգլիայի համար, ինչը հիմք հանդիսացավ բրիտանական կառավարության կողմից ընկերության բաժնետոմսերի 51% ձեռքբերման և Իրանում ընկերության արդյունաբերական և առևտրական գործունեության ընդլայնման համար: ԱՊՆԸ-ի հզորացումը նպաստեց նաև Իրանի տնտեսական և քաղաքական կյանքում Անգլիայի դիրքերի ամրապնդմանը: Ենթաբաժնում քննարկվում է, թե ինչպես էր Մեծ Բրիտանիան երկար տարիներ միանձնյա շահագործում իրանական նավթը և ստանում հսկայական շահույթներ՝ Իրանին անմասն պահելով այդ եկամուտներից, ընդհուպ մինչև Մոսադեղի կառավարության կողմից երկրի նավթարդյունաբերության ազգայնացման ժամանակաշրջանը:

Երկրորդ ենթաբաժնում՝ «Միջազգային նավթային կոնսորցիումի ստեղծումն ու գործունեությունը 1950-ական թթ.» ներկայացվում են ԱՄՆ-ի գործուն մասնակցությամբ Մոսադեղի կառավարության տապալումից հետո 1954թ. երկրում Միջազգային նավթային կոնսորցիումի (ՄՆԿ) ստեղծման ու գործունեության առանձնահատկությունները:

ՄՆԿ-ի ստեղծումը մեծապես նպաստեց ամերիկյան խոշոր նավթային ընկերությունների երկար սպասված մուտքին Իրանի նավթարդյունաբերություն և ԱՄՆ-ի տնտեսա-քաղաքական ակտիվ ներթափանցմանը երկիր: Ձևավորվեց Իրանի ղեկավար շրջանների ամերիկամետ քաղաքականությունը, ինչը վկայում էր 1955թ.



Բաղդադի պակտին անդամակցումը և ԱՄՆ-ի հետ սերտ տնտեսական համագործակցությունը:

Թեև ՄՆԿ-ը շարունակում է ԱԻՆԸ-ի թալանչիական քաղաքականությունը, այնուամենայնիվ, այդ մենաշնորհային ընկերության գործունեության ընթացքում Իրանի նավթային եկամուտները բավականին աճեցին, որոնք, սակայն, երկրի իշխանությունների կողմից հիմնականում օգտագործվեցին զենքի և ռազմամթերքի ձեռքբերման և լայնածավալ ներմուծումների նպատակով՝ երկիրը թողնելով սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամային վիճակում:

Երրորդ ենթաբաժնում՝ «Իրանի նոր նավթային քաղաքականության ձևավորումը և նրա ազդեցությունը երկրի տնտեսական և քաղաքական զարգացման վրա» քննարկվում են Իրանի՝ սեփական նավթարդյունաբերության զարգացման միտումները և երկրի ղեկավարության կողմից նոր նավթային քաղաքականության մշակումը, ինչը վկայում է 1957թ. նավթի մասին օրենքի ընդունումը:

Այս իրադարձությունը շատ կարևոր նշանակություն ունեցավ Իրանի համար, քանի որ վերացնում էր ՄՆԿ-ի կողմից երկրի նավթարդյունաբերության մենաշնորհային շահագործումը՝ թույլ տալով այլ ընկերություններին ևս շահագործել իրանական նավթը, որը երկրին բերելու էր հավելյալ եկամուտ: Առաջին պայմանագիրը, որ Իրանը կնքեց այլ ընկերության հետ, իտալական պետական նավթային հոլդինգ «Էնտե Նացիոնալե Իդրոկարբուրի» ընկերությունն էր (ԷՆԻ): Ըստ այդ համաձայնագրի՝ ստեղծվեց «Աջիպ Մինիերարիա» ընկերությունը, որը ԻԱՆԸ-ի հետ հիմնեց իրանա-իտալական համատեղ ընկերություն՝ «Սոսյետե իրանո-իտալիեն դե փեթրոլ» (ՍԻՐԻՊ) անվանումով, իրանական նավթի հետախուզման և արդյունահանման նպատակով, որը Իրանին պետք է ապահովեր եկամուտների 75%-ը:

Իրանա-իտալական համաձայնագրի կնքումը ամբողջովին խախտում էր ՄՆԿ-ի անդամների կողմից ընդունված և երկար տարիներ գործող եկամուտների բաժանման սկզբունքը: Տվյալ նավթային համաձայնագիրը շատ կարևոր փուլանիշ էր Իրանի նավթային քաղաքականության մեջ: Եվ ոչ միայն, որովհետև այն ձեռնտու էր երկրի համար, այլև քանի որ Իրանի ղեկավար շրջանները ձգտում էին երկրի

ազգային նավթային արդյունաբերության ամրապնդման և զարգացման քաղաքականություն վարել՝ հակադրելով ԷՆԻ ընկերությանը համաշխարհային նավթային կարտելի մեջ մտնող խոշորագույն նավթային մենաշնորհատերերին: ԷՆԻ-ի հետ համաձայնագրի կնքումից հետո Իրանը սկսեց նավթային պայմանագրերի շնորհման նոր սկզբունքի ամրապնդման քաղաքականություն վարել՝ պայմանագրեր կնքելով Միջազգային նավթային կարտելի կազմի մեջ չմտնող ընկերությունների՝ «Փան-Ամերիքեն Փեթրոլեում» և ֆրանսիական պետական նավթային ընկերության՝ ԷՐԱՊ-ի հետ:

Այսպիսով, Իրանի նավթային եկամուտները սկսեցին արագ աճել, 1959-1960թթ. դրանք կազմեցին $258,7 մլն, իսկ 1961-1962թթ. մոտավորապես $290 մլն: Սակայն երկրի ղեկավար շրջաններին չհաջողվեց երկիրը դուրս բերել ֆինանսա-տնտեսական լուրջ դժվարություններից, որը պատճառ հանդիսացավ ճգնաժամային վիճակի տարածմանը երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում՝ առաջադրելով վարչակարգի քաղաքականության փոփոխման անհրաժեշտության հարցը:

Երկրորդ գլուխը՝ «ՆԱՎԹԻ ԳՈՐԾՈՆԸ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 1960-1970 ԹԹ» նվիրված է այդ շրջանում նավթից ստացվող եկամուտների ազդեցության մեծացմանը երկրի տնտեսա-քաղաքական զարգացման գործընթացում, Պարսից Ծոցում Իրանի նավթային քաղաքականությանը և Իրանի անդամակցությանը ՕՊԵԿ-ին:

<u>Առաջին ենթաբաժնում</u>՝ «Նավթի ազդեցության մեծացումը երկրի տնտեսական և քաղաքական կյանքում» քննարկվում են Իրանի իշխանությունների կողմից երկրիրը սոցիալ-տնտեսական ճգնաժամից դուրս բերելու նպատակով կատարվող «Սպիտակ հեղափոխության», որի իրականացման համար կարևոր նշանակություն ունեին նավթից ստացվող եկամուտները, ինչպես նաև երկրի ներքին ու արտաքին քաղաքականության առանձնահատկությունները,:

Իրանի տնտեսական զարգացման ֆինանսական աղբյուր էին հանդիսանում հետզհետե աճող նավթային եկամուտները, որոնք 1962-1967թթ. ընթացքում գերազանցեցին $2 մլրդ: 1960-ական թթ. սկզբին Ամիր Աբբաս Հովեյդայի



կառավարության կողմից Իրանի ինդուստրացումը հայտարարվեց երկիրը տնտեսական հետամնացությունից դուրս բերելու գլխավոր միջոց: Նավթային եկամուտները նաև հիմք հանսիսացան Երրորդ (1962-1968թթ.) և Չորրորդ (1968-1973 թթ.) զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար:

Երկիրը շարունակում էր իր ամերիկամետ քաղաքականությունը՝ միաժամանակ բարելավելով հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Վարչակարգի ներքին քաղաքականությունը բնութագրվում էր Մոհամմեդ Ռեզա շահի անձնական իշխանության ամրապնդմամբ: Վերջինս շարունակելով դիտել սեփական իշխանության գրավականը զինված ուժերի մեջ՝ նավթից ստացվող եկամուտների մեծ մասը ծախսում է երկրի ռազմականացման ծրագրերի և զենքի ու զինամթերքի ներմուծման վրա, ինչի հետևանքով Իրանի բյուջեի ծախսերը գերազանցում էին մուտքերին, որն էլ առաջ էր բերում բյուջեի ճեղքվածք: Երկրիրը ստիպված էր լինում դիմել ամերիկյան «անվերադարձ» օգնություններին, այդ կերպ նպաստելով Իրանում ԱՄՆ-ի տնտեսա-քաղաքական դիրքերի ամրապնդմանը:

<u>Երկրորդ ենթաբաժինը</u>՝ «Պարսից Ծոցում Իրանի նավթային շահերը և քաղաքականության ամրապնդումը» ներկայացնում է Իրանի հարաբերությունները Պարսից ծոցի երկրների հետ և մայրցամաքային ծանծաղուտի հետ կապված խնդիրները: Նավթային շահերը նշանակալից դեր ունեցան Պարսից Ծոցում Իրանի քաղաքական ակտիվացման հարցում, հատկապես Մեծ Բրիտանիայի ազդեցության թուլացման պայմաններում, որի հետևանքով Ծոցի երկրները ձգտում էին ամրապնդել սեփական դիրքերը:

1955թ. հունիսի 19-ին ընդունվեց Իրանի կողմից իր տարածքը հարող մայրցամաքային ծանծաղուտի նկատմամբ երկրի իրավունքների մասին օրենքը: Իսկ ծովի ընդերքում նավթի և գազի հարուստ պաշարների հայտնաբերումից հետո Իրանի, Իրաքի և Սաուդյան Արաբիայի կառավարությունները 1959թ. ապրիլի 12-ին ընդունեցին ջրային գոտու 12 մղոն շառավղով բաժանման սկզբունքը, ինչը հակասում էր ԱՄՆ-ի և Անգլիայի շահերին, քանի որ այդ բաժանումից օգտվում էին ճապոնական և եվրոպական այլ ընկերությունները՝ ձեռք բերելով նավթի շահագործման տարբեր տեսակի պայմանագրեր:

Պարսից Ծոցում Իրանի քաղաքականության ակտիվացումը կապված էր նաև անգլիացիների հեռացումից հետո տարածաշրջանի պահապանի դերը ստանձնելու նկրտումների հետ, ինչի մասին բազմիցս նշել էին ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք ցանկանում էին իրենց շահերի պաշտպանը դարձնել Իրանն ու Սաուդյան Արաբիան և Պարսից Ծոցի անվտանգության ապահովման պատասխանատվությունը դնել այդ երկրների վրա:

1960-ական թթ. վերջին Իրանին հաջողվեց ամրապնդել իր դիրքերը Պարսից Ծոցում և բարելավել (որոշ բացառություններով) հարաբերությունները տարածաշրջանի արաբական պետությունների հետ:

<u>Երրորդ ենթաբաժնում</u>՝ «ՕՊԵԿ-ը և Իրանի կառավարության նավթային քաղաքականությունը 1960-1970թթ.» քննարկվում են Միջազգային նավթային կարտելին հակակշռի՝ ՕՊԵԿ-ի ստեղծումն ու գործունեությունը և Իրանի անդամակցումն այդ կառույցին:

ՕՊԵԿ-ի ստեղծման պատճառներն էին հանդիսանում նավթային մենաշնորհների կողմից համաշխարհային նավթային շուկայում գների իջեցումը, ինչի հետևանքով կրճատվում էին նավթարդյունաբերող երկրների համար մեծ կարևորություն ունեցող նավթային եկամուտները: Այդ քաղաքականության հետևանքով արևմտյան նավթային տրեստերը ստանում էին գերշահույթներ, որոնք էժան գնով ձեռք բերված նավթը վերամշակում էին և մի քանի անգամ բարձր գնով վաճառում սպառողին:

1959թ. ապրիլին Կահիրեում հրավիրվեց նախադեպը չունեցող I Արաբական նավթային կոնգրեսը, որտեղ Իրանն ու Վենեսուելան մասնակցեցին որպես դիտորդներ: Կոնգրեսի վերջում մասնակիցները միմյանց հետ համագործակցելու նպատակով ստորագրեցին «ջենթլմենական» համաձայնագիր, որն էլ հիմք հանդիսացավ հաջորդ տարի ՕՊԵԿ-ի ստեղծմանը, որի առաջին հիմնադիր-անդամները դարձան Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան և Վենեսուելան, որոնց շուտով միացան Կատարը, Ինդոնեզիան, Լիբիան, Աբու - Դաբին, Ալժիրը, Նիգերիան, Էկվադորն ու Գաբոնը: ՕՊԵԿ-ի գլխավոր նպատակն էր անդամ-պետությունների նավթային քաղաքականության համակարգումն ու



միասնականացումը և նրանց շահերի պաշտպանումը ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ հիմքերի վրա: ՕՊԵԿ-ում առաջնորդների դերը ստանձնել էին Իրանն ու Սաուդյան Արաբիան: ՕՊԵԿ-ի հեղինակությունը 1960-ական թթ. երկրորդ կեսից սկսեց արագորեն աճել, ինչը մեծ անհագնստություն առաջացրեց ԱՄՆ-ի մոտ:

ՕՊԵԿ-ի անդամ նավթարդյունաբերող երկրների դիրքերի հետագա ամրապնդումը համաշխարհային նավթային թատերաբեմում հնարավորություն տվեց Իրանին 1960-ական թթ. բանակցություններ սկսել ՄՆԿ-ի հետ՝ միմյանց միջև պայմանագրի պայմանների վերանայման խնդրի շուրջ: Իրանի կառավարության հիմնական պահանջն էր ավելացնել Իրանի բաժինը նավթային եկամուտներից, մեծացնել արդյունահանման ծավալները և կրճատել կոնսորցիումի պայմանագրի տարածքները: Համաձայն ԱՄՆ-ի պետդեպարտամենտի՝ երկրի նախագահի խորհրդականներին հղած ուղերձների՝ Մեհամմեդ Ռեզա շահը պահանջում էր Իրանի համար տարեկան $1 մլրդ եկամուտ: Շահն իրեն թույլ տվեց դիմել այդ քայլին՝ հաշվի առնելով 1967թ. արաբական նավթային էմբարգոն, որի հետևանքով ԱՄՆ-ը համաձայնվեց շահի պահանջներին: Շուտով Իրանը ՄՆԿ-ի առջև դրեց նոր պահանջներ:

Չնայած այս հաջողություններին՝ Իրանի ղեկավար շրջանները, ելնելով ԱՄՆ-ի հետ տնտեսա-քաղաքական սերտ համագործակցությունից, չէին համարձակվում վերջնականապես դնել ՄՆԿ-ի պայմանագիրը չեղյալ հայտարարելու հարցը: Այնուամենայնիվ, 1970-ական թթ. առաջին կեսը կարելի է համարել նավթարդյունաբերող երկրների և Միջազգային նավթային կարտելի անդամների միջև նավթի հետ կապված հարաբերություններում բեկումնային ժամանակաշրջան:

<u>Չորրորդ ենթաբաժինը</u>՝ «ՕՊԵԿ-ի շրջանակներում Թեհրանի, Տրիպոլիի և Ժնևյան նավթային համաձայնագրերը» անդրադառնում է 1970-ական թթ. սկզբին ՕՊԵԿ-ի ընդունած որոշումներին, որոնց համաձայն նավթարդյունաբերող երկրները իրենց երկրներում գործող օտարերկրյա ընկերություններից սկսեցին պահանջել նավթի եկամուտներից իրենց մասնաբաժնի մեծացումը մինչև 55%-ի, ինչպես նաև Կարակասի, Թեհրանի, Տրիպոլիի և Ժնևի համաձայնագրերով որոշվեց նավթի գները

բարձրացնել 10%-ով, որի հետևանքով նրա անդամների ընդհանուր եկամուտը 1973թ. կազմեց $28.7մլրդ:

Այսպիսով, ՕՊԵԿ-ը՝ որպես կազմակերպություն, ապացուցեց, որ միասնական ուժերով և մի կողմ դնելով ներքին տարաձայնությունները հնարավոր է պայքարել կապիտալիստական աշխարհի ամենահարուստ և հզոր ընկերությունների դեմ: 1971-1973թթ. բանակցությունները հանգեցրին նավթի շուկայում ուժերի հարաբերակցության լիակատար փոփոխմանը, նավթարդյունաբերող երկրների և նրանց մարմնի՝ ՕՊԵԿ-ի դերի մեծացմանը նավթարդյունաբերության զարգացման արմատական հարցերի լուծման ժամանակ:

Այդուհանդերձ, 1970-1971թթ. նավթի գների աճը չպետք է վերագրել միայն ՕՊԵԿ-ի ձեռնարկած գործողություններին, այլ, ավելի շատ, կարելի է համարել հանգամանքների զուգադիպում, ինչպես՝ նավթային կարտելի ամերիկյան անդամների կողմից այդ գների աճին չխոչընդոտելը, 1967թ. արաբա-իսրաելյան պատերազմից հետո նավթարդյունաբերող երկրների համար ստեղծված բարենպաստ քաղաքական պայմանները, համաշխարհային շուկայում նախադեպը չունեցող նավթի պահանջարկի գերազանցումը առաջարկին, որը շատ ձեռնտու էր կապիտալիստական աշխարհի նավթի 90%-ը արտահանող նավթարդյունաբերող երկրների համար, Անդրարաբական նավթամուղի շարքից դուրս գալը, լցանավերի սակավ լինելու պատճառով վերջիններիս փոխադրումների թանկացումը:

<u>Հինգերորդ ենթաբաժնում</u>՝ «Իրանի կողմից ազգային նավթային սեկտորի զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքները մինչև 1973թ.» ներկայացվում են ԻԱՆԸ-ի կողմից երկրի ազգային նավթարդյունաբերության զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքները, որոնց հետևանքով Քերմանշահի գործարանի նավթի վերամշակումը 300.000տ-ից հասավ 780.000տ: 1973թ. Շիրազում շահագործման դրվեց 2մլն. տոննա արտադրողականությամբ գործարանը: Թեհրանի նավթավերամշակող գործարանը նավթով ապահովելու համար կառուցվեց Ահվազ-Թեհրան նավթամուղը 760կմ. երկարությամբ: Կառուցվեցին նաև այլ նավթամուղներ, որոնք կապում էին Ազնան Սպահանի, Ռեյը Մաշհադի, Ռեյը Ղազվինի և Ռեշթի, Նավթեշահը Քերմանշահի հետ: 1967թ-ից



ԻԱՆԸ-ը ՄՆԿ-ից ստանալով տարեկան շուրջ 5 մլն. տոննա նավթ՝ սկսեց ինքնուրույն նավթ արտահանել:

Չնայած վերը նշված բազմաթիվ դրական փոփոխություններին՝ Իրանը շարունակում էր մնալ Արևմուտքի երկրների նավթի մատակարարը: Իրանի ղեկավարության արևմտամետ արտաքին քաղաքականությունը և երկրի տնտեսության կախվածությունը կապիտալիստական աշխարհից, խոչընդոտում էին Թեհրանի անկախ քաղաքականության վարելուն: Շահը չցանկանալով բարդացնել իր հարաբերությունները Արևմուտքի հետ, շարունակում էր նրանց նկատմամբ վարել հանդուրժողական քաղաքականություն և չէր համարձակվում արմատական փոփոխություններ իրականացնել երկրի նավթային քաղաքականության ոլորտում, քանի որ նավթային մենաշնորհների կողմից արդյունահանման չափերի մեծացմանը զուգընթաց ավելանում էին նաև երկրի եկամուտները: Ֆինանսական պոտենցիալը կարևոր նշանակություն ուներ շահական վարչակարգի համար, քանի որ այն օգտագործվում էր շահի անձնական, միապետական իշխանության ամրապնդման նպատակով:

Երրորդ գլխում՝ «ՆԱՎԹԻ ԳՆԵՐԻ ԿՏՐՈՒԿ ԱՃԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ 1970-ԱԿԱՆ ԹԹ» ներկայացվում են Իրանի կառավարության և ՄՆԿ-ի նոր պայմանագրի առանձնահատկությունները, և Իրանի տնտեսական և քաղաքական առաջընթացի վրա աննախադեպ նավթային եկամուտների ազդեցության հանգամանալի վերլուծությունը:

Այս գլխի <u>առաջին ենթաբաժինը</u>՝ «Արաբա-իսրաելյան պատերազմը և համաշխարհային նավթային ճգնաժամի առաջացումը» նվիրված է 1973թ. հոկտեմբերին արաբական երկրների նկատմամբ Իսրայելի վարած ագրեսիվ քաղաքականության հետևանքով Մերձավոր Արևելքում առաջացած նավթային էմբարգոյի և նրա հետևանքների քննարկմանը:

1973թ. Մերձավոր Արևելքում արաբա-իսրայելյան պատերազմի ժամանակ («Յոմ Քիպուրի» պատերազմ) արաբական 10 երկրներ՝ Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրաքը, Ալժիրը, Լիբիան, Աբու-Դաբին, Բահրեյնը, Եգիպտոսը, Սիրիան և

Կատարը որոշում ընդունեցին նախորդ ամսվա համեմատ 5%-ով կրճատել իրենց երկրներում արդյունահանվող նավթի չափերը, և յուրաքանչյուր հաջորդող ամիս կրճատել ևս 5%-ով այնքան ժամանակ մինչև Իսրայելի կողմից 1967թ. օկուպացված տարածքները չվերադարձվեին իրենց օրինական տերերին և չվերականգնվեն պաղեստանյան ժողովրդի իրավունքները: Կապիտալիստական երկրներում սկսվեց վառելիքի լուրջ պակասություն զգացվել ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ առևտրի կետերում, ինչն էլ իր հերթին հանգեցրեց նավթի և նավթամթերքի գների կտրուկ աճի:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա այն արաբա-իսրաելյան պատերազմի ընթացքում երկակի քաղաքականություն էր վարում: Իրանը ոչ միայն մեծացրեց բժշկական օգնության չափը, այլև ինքնաթիռներ և օդաչուներ ուղարկեց Սաուդյան Արաբիա տեխնիկական օգնություն ցուցաբերելու նպատակով: Բացի այդ շահը թույլ տվեց խորհրդային ոչ ռազմական ինքնաթիռներին իր տարածքով թռչել Արաբական երկրներ՝ նրանց ռազմական սարքավորումներով օգնելու համար և նույնիսկ արգելեց իսրայելյան փրկարարական ջոկատներին Ավստրալիայից Թեհրանով մեկնել Թել-Ավիվ: Շահի նմանատիպ քաղաքականությունը ուղղված էր ամրապնդելու իր դիրքերը տարածաշրջանում և, անշուշտ, սերտացնել հարաբերությունները արաբական երկրների հետ:

Մյուս կողմից շահը, անտեսելով ՕՊԵԿ-ի անդամ երկրների հետ ունեցած իր համաձայնագրերը, ավելացրեց Իրանի նավթի արդյունահանման չափերը, որպեսզի լրացնի արաբական էմբարգոյի հետևանքով առաջացած նավթի պակասուրդը:

Իրանի կողմից այդպիսի քաղաքականությունը սուր քննադատության արժանացավ ՕՊԵԿ-ի անդամ պետությունների և հատկապես Սաուդյան Արաբիայի և Իրաքի կողմից, որոնք նշեցին, որ Իրանը խախտում է համագործակցության մասին որոշումները՝ Իրանի այդ քայլը որակելով որպես ՕՊԵԿ-ի սկզբունքներին դավաճանություն:

Արաբա-իսրաելյան հակամարտության ընթացքում 1974թ. արաբական երկրներին ուղղվեցին ռազմական սպառնալիքներ, Արևմուտքում սկսեցին ավելի



լրջորեն վերաբերվել ՕՊԵԿ-ին՝ որպես կազմակերպության, և դրվեց նրան որպես հակակշիռ (հակա-ՕՊԵԿ) որևէ կառույցի ստեղծման անհրաժեշտության հարցը:

Չնայած նավթային պատերազմում արաբական երկրների նպատակները իրենց սոցիալ-տնտեսական պլանով շատ տարբեր էին, այնուամենայնիվ, իրենց գործողություններով նրանք ԱՄՆ-ին բարոյա-քաղաքական մեծ հարված հասցրին և ցույց տվեցին ամբողջ Արևմուտքի կախվածության աստիճանը տարածաշրջանի նավթի մատակարարումից:

<u>Երրորդ գլխի երկրորդ ենթաբաժինը</u>՝ «Իրանի կառավարության նոր պայմանագիրը ՄՆԿ-ի հետ և համաշխարհային նավթի գների կտրուկ աճը 1970-ական թթ. սկզբին» անդրադառնում է 1973թ. Իրանի կառավարության և ՄՆԿ-ի միջև նոր պայմանագրի ստորագրմանը և նրա առանձնահատկություններին, ինչպես նաև նավթի գների քառակի բարձրացման հետևանքով Իրանի եկամուտների աննախադեպ աճին:

1972թ. վերջին Մոհամմեդ Ռեզա շահը, հաշվի առնելով արաբական նավթարդյունաբերող երկրների և այնտեղ գործող նավթային ընկերությունների միջև հարաբերությունների փոփոխման իրողությունները և 1973թ արաբա-իսրայելյան հակամարտությունը, առաջին անգամ խոսք բացեց ՄՆԿ-ի հետ նոր պայմանագրի անհրաժեշտության մասին: Ենթադրվում է, որ այդ որոշման վրա մեծ ազդեցություն գործեցին միջազգային բարենպաստ պայմանները, Իրանի՝ որպես պետության կարգավիճակի բարձրացումը, արաբական նավթային պատերազմի սպառնալիքների հետևանքով տարածաշրջանում նրա քաղաքական դիրքերի զգալի ամրապնդումը, երկրի Ֆինանսա-տնտեսական վիճակի բարելավումը և համաշխարհային նավթային ճգնաժամը:

1973թ. հունվարի 21-ին Մոհամմեդ Ռեզա շահը հայտարարեց, որ Իրանը որոշում է ընդունել այլևս չերկարաձգել ՄՆԿ-ի հետ պայմանգիրը և առաջարկեց շարունակել կատարել 1954թ. կնքված պայմանագրի պայմանները մինչև ժամկետի լրացումը, այսինքն՝ 1979թ., որից հետո այն չէր երկարաձգվի, իսկ կոնսորցիումի անդամները կդառնային նավթի հասարակ գնորդներ ընդհանուր պայմաններով, կամ միանգամից կնքել նոր պայմանագիր, որը ԻԱՆԸ-ին կդարձներ կոնցեսիոն գոտու

նավթային ընկերությունների իրական սեփականատերը: Այս պայմանով ՄՆԿ-ը կկարողանար գնել իրանական նավթը մեծ քանակով և արտոնյալ պայմաններով:

1973թ. մայիսի 24-ին Թեհրանում կնքվեց նոր համաձայնագիր Իրանի կառավարության և 25 օտարերկրյա ընկերությունների միջև: Մասնակից ամերիկյան ընկերությունների քանակն ավելացավ երկու անգամ, ինչի հետևանքով թուլացան եվրոպական և հատկապես անգլիական ընկերությունների դիրքերն Իրանում: Պայմանագրի համաձայն ԻԱՆԸ-ը ստացավ երկրի ամբողջ նավթարդյունաբերության ինքնուրույն շահագործման, նավթի ու գազի պաշարների և ՄՆԿ-ի ունեցվածքի վերահսկման իրավունքը: ԻԱՆԸ-ի սեփականության տակ անցան նախկին կոնցեսիոն տարածքների բոլոր կառույցները, այդ թվում նավթահորերը, նավթամուղերը, նավթամթերքամուղերը, Աբադանի նավթավերամշակման գործարանը, Մասջեդ-Սոլեյմանի նավթաթոր գործարանը, նավթամբարները, նավահանգստի կառույցները և այլն: ՄՆԿ-ի անդամներն ստացան պաշտոնական վճառքի գնից 22 ցենտի զեղչ յուրաքանչյուր բարելի համար:

Նոր համաձայնագիրը չէր վերացնում ՄՆԿ-ի կողմից իրանական նավթի արտահանման իրավունքը:

ՄՆԿ-ը՝ որպես խոշորագույն նավթային մոնոպոլիաների կազմակերպություն, շարունակելու էր գործել Իրանում, որի նպատակով ստեղծվեց հատուկ «Ծառայությունների ընկերություն»: Այնուամենայնիվ, Իրանը կրկին հանդիսանալու էր ՄՆԿ-ի նավթի մատակարարը:

1973թ. հոկտեմբերի 16-ին Վիեննայում Պարսից ծոցի վեց պետությունները՝ Սաուդյան Արաբիան, Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Աբու-Դաբին և Կատարը 70%-ով բարձրացնել նավթի գները: Նավթի գինը հաստատվեց $5.119 յուրաքանչյուր բարելի համար: Դեկտեմբերի 22-ին որոշվեց 1974թ. հունվարի 1-ից կրկին բարձրացնել նավթի գները, որոնք կազմեցին $11.651 մեկ բարելի համար:

Չնայած Իրանի կառավարությունը արևմտյան նավթային ընկերությունների նկատմամբ վարում էր հանդուրժողական քաղաքականություն, այնուամենայնիվ, այն օգտագործեց աշխարհում ստեղծված տնտեսական կոնյունկտուրան իր նպատակների՝ նավթի գների բարձրացման նպատակով:



Իսկ 1974թ. նավթի մասին օրենքով օտարերկրյա ընկերությունները կարող էին Իրանում հանդես գալ միայն որպես կապալառու ընկերություններ, ոչ թե որպես համատեղ սեփականատերեր, ինչն ուղղված էր երկրում օտարերկրացիների իրավունքների ու արտոնությունների սահմանափակմանը:

Այսպիսով, Իրանի կողմից իր նավթարդյունաբերության վրա լիակատար հսկողություն հաստատելու պայմաններում նա երկրին չէր ստանալու այն խոշոր եկամուտները, որոնք ստանում էին Արևմուտքի նավթային մոնոպոլիաները՝ իրանական նավթը զեղչված գներով գնելու և վերամշակելուց հետո վաճառելու միջոցով: Այդ մեծ եկամուտները բաժին էին ընկնում նավթային մոնոպոլիաներին և նրանց հովանավոր կառավարություններին:

<u>Երրորդ ենթաբաժնում</u>՝ «Աննախադեպ նավթային եկամուտները որպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր պայման, և շահական վարչակարգի ներքին քաղաքականությունը» քննարկվում են նավթային եկամուտների ազդեցությունը Իրանի տնտեսական զարգացման գործընթացում և շահի վարած քաղաքականության առանձնահատկությունները:

Նավթի գների բարձրացման հետևանքով շատ արագ սկսեցին աճել ՕՊԵԿ-ի անդամ նավթարդյունաբերող երկրների եկամուտները, և եթե 1972թ. Իրանի եկամուտը նավթից կազմել էր $2.4 մլրդ. ապա 1973թ. այն կազմեց $17.5մլրդ: Այս աննախադեպ եկամուտները՝ նավթադոլլարները, կարևորագույն ազդեցություն ունեցան Իրանի հասարակական-քաղաքական և սոցիալ տնտեսական կյանքի բոլոր բնագավառների վրա. փոխվեց երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը, զգալի փոփոխություններ տեղի ունեցան երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Մոհամմեդ Ռեզա շահը և նրա շրջապատը կարծում էին, թե երկրի ֆինանսական վիճակի բարելավման պայմաններում, հենվելով նավթային եկամուտների վրա, հնարավոր կլինի ազգային տնտեսությունը հետամնացությունից դուրս բերել և 20-25 տարվա ընթացքում Իրանը վերածել հզոր կապիտալիստական երկրի: Շահը որոշում է երկրում իրականացնել արագ ինդուստրացում:

Նախատեսվում էր առաջին հերթին սև և գունավոր մետալուրգիայի, նավթաքիմիայի, ալյումինի արտադրման, ինչպես նաև արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտրի և շինարարական մեքենաշինական գործարանների կառուցումը, ենթակառուցվածքների՝ էներգահամակարգի, նավահանգիստների, երկաթգծերի և ավտոմոբիլային ճանապարհների, և տնտեսության այլ ճյուղերի ստեղծումը: Հատուկ նշանակություն էր տրվում նավթաքիմիային, որը երկրի ներքին արդյունաբերական և կենցաղային պահանջները բավարարելուց զատ պետք է զարգացներ նաև նավթամթերքի արդյունահանումը՝ ակնկալելով ապահովել ամբողջ աշխարհի նավթամթերքի պահանջների 10-15%-ը: Շահական վարչակարգը նախատեսում էր Իրանում ստեղծել $30 մլրդ. արժողությամբ 23 ատոմակայանների ցանց: Իտալիայի, Արևմտյան Գերմանիայի, ԱՄՆ-ի, Չինաստանի, Կորեայի և այլ երկրների հետ կնքվեցին տնտեսական համագործակցության բազմաթիվ պայմանագրեր:

5-րդ Զարգացման ծրագիրը (1973/1974-1977/1978 թթ.) 1974թ. վերանայվեց և նախկին $32.5մլրդ. փոխարեն որոշվեց հատակացնել $69.5 մլրդ, որի հիմքում ընկած էր խոշոր արդյունաբերական օբյեկտների կառուցումը և մեծ քանակությամբ ժամանակակից տեխնոլոգիաների ձեռք բերումը: Սակայն այդպիսի օբյեկտների շինարարությունը նախատեսվել էր առանց Իրանի տնտեսական հնարավորությունները և երկրի արտադրողական ու սոցիալական ենթակառուցվածքների զարգացվածության աստիճանը հաշվի առնելու: Սա արդեն իսկ ճախողում էր Իրանի ղեկավարության՝ երկիրը զարգացած ինդուստրիալ պետության վերածելու ծրագիրը: Պետական սեկտորը գերիշխող էր երկրի տնտեսությունում, ինչը հանգեցնում էր տնտեսության և քաղաքականության կենտրոնացմանը շահի և նրա շրջապատի ձեռքում և նրա միանձնյա կառավարմանը:

Այդ ժամանակաշրջանում Իրանի հասարակական-քաղաքական կյանքը բնորոշվում է մինչկապիտալիստական կացութաձևի գերիշխող լինելու պայմաններում կապիտալիզմի արագ զարգացմամբ, ինչի հետևանքով



շարունակվում էր սոցիալական տարբեր խավերի տարանջատումը միմյանցից, հարուստների ու աղքատների, գյուղի և քաղաքի միջև անդունդի մեծացումը:

Երկում խստորեն զգացվում էր որակավորված աշխատավորների, ինժեներա-տեխնիկային կադրերի, բժիշկների, ուսուցիչների և այլ մասնագետների պակասություն: Միևնույն ժամանակ շատ իրանցիներ արտասահմանում ստանալով բարձրագույն կրթություն, չէին ցանկանում վերադառնալ իրենց երկիր:

Շահի հայտարարած նոր ռեֆորմները պետք է հարթեին երկրում առաջացած սոցիալական հակասությունները և բարելավեին երկրի աշխատավոր խավերի վիճակը:

Փաստորեն, պայմաններ էին ստեղծվել երկիրը տնտեսական հետամնացությունից դուրս բերելու համար: Սակայն Իրանի ղեկավար շրջանները, առաջ քաշելով երկրի արագացված ինդուստրացման ծրագիրը, հաշվի չառան այդ ծրագրի իրականացման համար բոլոր անհրաժեշտ նախապայմանները՝ իրենց ուշադրությունը սևեռելով շահական վարչակարգի իշխանության ամրապնդմանը: Կարելի է ենթադրել, որ շահի համար բարենորոգչական ծրագրերը ինքնանպատակ չէին հանդիսանում, այլ ընդամենը հասարակական կարծիքի կառավարման միջոց: Շահի արևմտամետ քաղաքականությունը և նավթադոլլարների օգտագործումը սեփական իշխանության և վարչակարգի ամրապնդման նպատակով պայմանավորում էին երկրի սոցիալ-տնտեսական արագ զարգացման ձախողումը: Այդ ձախողման պատճառն էր հանդիսանում նաև երկրի ռազմականացման քաղաքականությունը:

<u>Չորրորդ ենթաբաժնում</u>՝ «Նավթի ազդեցությունը Իրանի և ԱՄՆ-ի հարաբերությունների զարգացման վրա 1970-ական թթ. երկրորդ կեսին» լուսաբանվում են շահական վարչակարգի ներքին և արտաքին քաղաքականության առանձնահատկությունները և հատկապես ԱՄՆ-ի հետ տնտեսա-քաղաքական հարաբերությունների սերտացումը:

1970-ական թթ. սկզբին նավթի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով ԱՄՆ-ի ղեկավար շրջանները և նավթային տրեստերը սկսում են մշակել զավթողական քաղաքականության ծրագրեր, որոնք հիմնված էին Մերձավոր և

Միջին Արևելյան տարածաշրջանի նավթին «երաշխավորված հասանելիության» դոկտրինի վրա: ԱՄՆ-ի նպատակն էր պահպանել Մերձավոր ու Միջին Արևելքի նավթին հասանելիությունը՝ խելամիտ գներով և երկրի պահանջներին համապատասխան: ԱՄՆ-ը ջանում էր Իրանի հետ սերտ հարաբերություններ հաստատել, իսկ տարածաշրջանում «կայունություն» պահպանել: Վաշինգտոնը իրականացնում էր Մերձավոր Արևելյան երկրներին ԱՄՆ-ի գործընկերը դարձնելու և նրանց նավթադոլլարները կապիտալիստական և հատկապես ամերիկյան տնտեսական և տարադրամա-ֆինանսական համակարգին կապելու քաղաքականություն, որի միջոցով հետագայում կկարողանար ճնշում գործադրել այդ պետությունների վրա: ԱՄՆ-ը իր նավթային պահանջները բավարարելու փոխարեն առաջարկում էր տնտեսական համագործակցություն և զենքի վաճառք:

1970-ական թթ. սկզբից երկրի ներքին ու արտաքին որոշակի գործոնների և միջազգային հարաբերությունների զարգացման և փոխներգործության շնորհիվ Իրանը սկսում է զգալի քաղաքական դեր խաղալ Մերձավոր և Միջին Արևելյան տարածաշրջանում: Զուգահեռաբար մեծանում է Իրանի դերը ԱՄՆ-ի արտաքին քաղաքական համակարգում, ընդ որում, այն պահանջներն ու շահերը, որոնք պայմանավորում էին ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում համընկնում էին Իրանի պահանջներին ու հավակնություններին, ինչը նպաստում էր այդ երկու երկրների հարաբերությունների սերտացմանը:

1960-ական թթ. վերջին ԱՄՆ-ի նախագահ Լ. Ջոնսոնը խրախուսեց Իրանին զենք վաճառելու շահի ձգտումը՝ այդ քաղաքականության իրագործման հարցում խոստանալով ամերիկյան ղեկավար շրջանների հովանավորությունը: Իսկ 1972թ. Ռ. Նիքսոնը համաձայնություն տվեց Իրանին վաճառել ԱՄՆ-ի զինանոցի ցանկացած տեսակի ժամանակակից զենք ու զինամթերք, բացի ատոմայինից: Եվ, եթե 1965-1974թթ. Իրանի ԱՄՆ-ից ներմուծվող զենքի ու զինամթերքի ծախսերը կազմեցին $1.4 մլրդ, ապա 1974-1975թթ. այդ նպատակի համար հատկացվեց $5.52մլրդ, իսկ 1975-1976թթ.՝ $7.9մլրդ: Երկրի կողմից գնված ռազմական տեխնիկայի որոշ տեսակների, ինչպես օրինակ «Թոմքեթ» F-14 ծովային ուժերի կործանիչը, չկային նույնիսկ ՆԱՏՕ-ի եվրոպական անդամների սպառազինության մեջ:



Այս քաղաքականության հետևանքով Իրանը ԱՄՆ-ի համար դարձել էր ոչ միայն «կայունության կղզի», ինչպես այն անվանում էր նախագահ Ջ. Քարտերը, այլև ամերիկյան դիրքերի «կայունության հենարանը» և «անվտանգության խորհրդանիշը» Միջին Արևելքում:

Այսպիսով, 1973թ.-ից հետո Իրանի արտաքին և ռազմական քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նավթային աննախադեպ եկամուտների պայմաններում Մոհամմեդ Ռեզա շահը սկզբում վարում էր քիչ թե շատ ինքնուրույն քաղաքականություն: Երկրի տնտեսական զարգացման համար նա դիմեց արտաքին աշխարհի հետ տնտեսա-քաղաքական հարաբերությունների զարգացմանը: Սակայն իր արևմտամետ քաղաքականության հետևանքով նա, այնուամենայնիվ, նախընտրեց ԱՄՆ-ի հետ ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսա-քաղաքական սերտ համագործակցությունը: Խրախուսելով գերժամանակակից զենք ու զինամթերք ունենալու շահի ցանկությունները և հովանավորելով նրա հեգեմոն ձգտումները՝ ԱՄՆ-ը նրա վրա ազդեցություն գործելու արդյունավետ գործիք ձեռք բերեց:

<u>Հինգերորդ ենթաբաժինը</u>՝ «Նավթը և հեղափոխությունը» ուսումնասիրում է նավթային եկամուտների նշանակությունը երկրում հեղափոխական իրադրության ձևավորման գործում:

Իրանի նավթային եկամուտները մի կողմից նպաստելով կապիտալիստական հարաբերությունների արագացված զարգացմանը՝ առաջացնում էին սոցիալական և քաղաքական լուրջ հակասություններ, իսկ մյուս կողմից ֆինանսական այդ մեծ կարողությունները և մեծ բանակը շահին ստիպում էին ավելի քիչ ուշադրություն դարձնել երկրի ցածր խավերի և գյուղացիության սոցիալական ծանր վիճակին: Դրանով է բացատրվում այն փաստը, որ դեռևս 1950-60ական թթ. իշխանությունները հասկանում էին գյուղերում կիսաֆեոդալական հարաբերությունների պահպանման վտանգը, սակայն 1970-ական թթ. կեսերից նրանք սկսեցին անտեսել այնտեղ ստեղծված ճգնաժամային իրավիճակը, ուր կապիտալիզմի արագ զարգացման պայմաններում հաճախակիացավ գյուղական տնտեսությունների լիովին սնանկացումը, ինչի հետևանքով գյուղատնտեսություն սկսեց անշահութաբեր

զբաղմունք համարվել: Հետևաբար ծանրացավ նաև գյուղացիության սոցիալական վիճակը, ինչը գյուղից քաղաք մեծաքանակ միգրացիայի պատճառ դարձավ:

Երկրի աննախադեպ նավթային եկամուտները հիմնականում ծախսվում էին շահական վարչակարգի կողմից կառավարվող պետական սեկտորի, և բյուրոկրատական բուրժուազիայի դիրքերի ամրապնդմանը: Բացի դրանից, երկրի եկամուտները ծառայում էին արևմտյան խոշոր ընկերությունների շահերին, որոնցից կատարվում էր տարբեր տեսակի տեխնոլոգիաների, արդյունաբերական սարքավորումների, ռազմական տեխնիկայի և զենքի ներմուծում՝ առանց հաշվի առնելու երկրի իրական հնարավորությունները, պահանջները և պետական շահերը:

Իրանի ղեկավար շրջանների վարած քաղաքականության հետևանքով նավթային աննախադեպ եկամուտների ժամանակաշրջանը Իրանի հասարակության համար հանդիսացավ սոցիալ-քաղաքական ճգնաժամի և հեղափոխական իրավիճակի ստեղծման նախաշեմը:

Այսպիսով, ճգնաժամային վիճակը, որը վերածվեց հեղափոխության, ձևավորվել էր դեռևս 1970-ական թթ. երկրորդ կեսից: Այդ իրավիճակի ստեղծման վրա մեծ ազդեցություն էին գործել սոցիալ-տնտեսական և քաղաքական հակասությունները, որոնք առաջացել էին Իրանում միապետական կարգերի պահպանման պայմաններում արագացված կապիտալիստական ուղիով զարգացման և հասարակական կյանքի ժամանակակից ու ավանդական ձևերի հակասությունների հետևանքներով:

ԵԶՐԱՓԱԿՄԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, հեղինակը եզրակացնում է.

- Նավթի հետ կապված խնդիրները, սկսած Անգլո-իրանական նավթային ընկերության ստեղծումից, սերտորեն կապված են եղել Իրանի տնտեսական, քաղաքական կյանքի հետ: Այդ կապը հատուկ նշանակություն ստացավ, երբ նավթից ստացվող եկամուտը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման գլխավոր միջոցը դարձավ: Իրանում ստեղծված խոշոր նավթարդյունաբերությունը երկար տարիներ որպես գործիք ծառայեց Մեծ Բրիտանիայի ձեռքում՝ երկրի սոցիալ տնտեսական և քաղաքական հարցերում որոշիչ դեր խաղալու համար: 1940թթ.



վերջին և 1950-ական թթ. սկզբին Իրանի ժողովրդավարական ուժերը հանդես եկան երկրի նավթարդյունաբերության նկատմամբ օտարերկրյա գերիշխանության վերացման և նրա երկրի ազգային տնտեսության ինտեգրման համար: Սակայն, շահական վարչակարգի արևմտամետ քաղաքականության և ազգային բուրժուազիայի անհետևողական քաղաքականության հետևանքով այդ շարժումը պարտություն կրեց:

- 1954թ. ՄՆԿ-ի ստեղծումից հետո ճանապարհ հարթվեց արևմտյան նավթային ընկերությունների և նրանց կառավարությունների կողմից իրանական նավթի շահագործման համար: Արևմուտքի մենաշնորհային կապիտալին կրկին հաջողվեց վերահսկողություն հաստատել Իրանի նավթի վրա: Միաժամանակ արևմտյան խոշոր նավթային ընկերությունները, իրենց եկամուտները ավելացնելու նպատակով մեծացրեցին իրանական նավթի արդյունահանումն ու արտահանումը, ինչը նպաստեց Իրանի պետական եկամուտների աճին:

- 1960-1970 թթ. նավթի և նրա եկամուտների ազդեցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա զգալիորեն մեծացավ: Նավթարդյունաբերության և հասարակական զարգացման փոխադարձ կապը ավելի ամրապնդվեց երկրում նավթի եկամուտների միջոցով արդյունաբերական զարգացման ծրագրերի իրականացման հետևանքով:

- Նավթային եկամուտները կարևոր դեր խաղացին Իրանի քաղաքական դիրքերի ամրապնդման և արտաքին քաղաքական կուրսի ձևավորման գործում, նպաստելով նրա հեղինակության բարձրացմանը: Հատկանշական է հարաբերությունների սերտացումը ԱՄՆ-ի հետ, որը, ցանկանալով Իրանը տեսնել որպես իր հենարանը տարածաշրջանում և Պարսից ծոցում հսկիչ-պահապանի դերում՝ վերջինին վաճառում էին գերժամանակակից զենք ու զինամթերք, որոնցից չունեին նույնիսկ ՆԱՏՕ-ի զորքերը:

- Իրանի արտադրողական ուժերի զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 1970-ական թթ. սկզբներին նավթային եկամուտների կտրուկ աճի պայմաններում, երբ երկիրը սկսեց նավթից տարեկան ստանալ մինչև $20մլրդ: Իրանը ոտք դրեց արագ ինդուստրացման ուղին: Սակայն երկրի ղեկավար

Նախատեսվում էր առաջին հերթին սև և գունավոր մետալուրգիայի, նավթաքիմիայի, ալյումինի արտադրման, ինչպես նաև արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտրի և շինարարական մեքենաշինական գործարանների կառուցումը, ենթակառուցվածքների՝ էներգահամակարգի, նավահանգիստների, երկաթգծերի և ավտոմոբիլային ճանապարհների, և տնտեսության այլ ճյուղերի ստեղծումը: Հատուկ նշանակություն էր տրվում նավթաքիմիային, որը երկրի ներքին արդյունաբերական և կենցաղային պահանջները բավարարելուց զատ պետք է զարգացներ նաև նավթամթերքի արդյունահանումը՝ ակնկալելով ապահովել ամբողջ աշխարհի նավթամթերքի պահանջների 10-15%-ը: Շահական վարչակարգը նախատեսում էր Իրանում ստեղծել $30 մլրդ. արժողությամբ 23 ատոմակայանների ցանց: Իտալիայի, Արևմտյան Գերմանիայի, ԱՄՆ-ի, Չինաստանի, Կորեայի և այլ երկրների հետ կնքվեցին տնտեսական համագործակցության բազմաթիվ պայմանագրեր:

5-րդ Զարգացման ծրագիրը (1973/1974-1977/1978 թթ.) 1974թ. վերանայվեց և նախկին $32.5մլրդ. փոխարեն որոշվեց հատակացնել $69.5 մլրդ, որի հիմքում ընկած էր խոշոր արդյունաբերական օբյեկտների կառուցումը և մեծ քանակությամբ ժամանակակից տեխնոլոգիաների ձեռք բերումը: Սակայն այդպիսի օբյեկտների շինարարությունը նախատեսվել էր առանց Իրանի տնտեսական հնարավորությունները և երկրի արտադրողական ու սոցիալական ենթակառուցվածքների զարգացվածության աստիճանը հաշվի առնելու: Սա արդեն իսկ ձախողում էր Իրանի ղեկավարության՝ երկիրը զարգացած ինդուստրիալ պետության վերածելու ծրագիրը: Պետական սեկտորը գերիշխող էր երկրի տնտեսությունում, ինչը հանգեցնում էր տնտեսության և քաղաքականության կենտրոնացմանը շահի և նրա շրջապատի ձեռքում և նրա միանձնյա կառավարմանը:

Այդ ժամանակաշրջանում Իրանի հասարակական-քաղաքական կյանքը բնորոշվում է մինչկապիտալիստական կացութաձևի գերիշխող լինելու պայմաններում կապիտալիզմի արագ զարգացմամբ, ինչի հետևանքով



շարունակվում էր սոցիալական տարբեր խավերի տարանջատումը միմյանցից, հարուստների ու աղքատների, գյուղի և քաղաքի միջև անդունդի մեծացումը:

Երկում խստորեն զգացվում էր որակավորված աշխատավորների, ինժեներա-տեխնիկային կադրերի, բժիշկների, ուսուցիչների և այլ մասնագետների պակասություն: Միևնույն ժամանակ շատ իրանցիներ արտասահմանում ստանալով բարձրագույն կրթություն, չէին ցանկանում վերադառնալ իրենց երկիր:

Շահի հայտարարած նոր ռեֆորմները պետք է հարթեին երկրում առաջացած սոցիալական հակասությունները և բարելավեին երկրի աշխատավոր խավերի վիճակը:

Փաստորեն, պայմաններ էին ստեղծվել երկիրը տնտեսական հետամնացությունից դուրս բերելու համար: Սակայն Իրանի ղեկավար շրջանները, առաջ քաշելով երկրի արագացված ինդուստրացման ծրագիրը, հաշվի չառան այդ ծրագրի իրականացման համար բոլոր անհրաժեշտ նախապայմանները՝ իրենց ուշադրությունը սևեռելով շահական վարչակարգի իշխանության ամրապնդմանը: Կարելի է ենթադրել, որ շահի համար բարենորոգչական ծրագրերը ինքնանպատակ չէին հանդիսանում, այլ ընդամենը հասարակական կարծիքի կառավարման միջոց: Շահի արևմտամետ քաղաքականությունը և նավթադոլլարների օգտագործումը սեփական իշխանության և վարչակարգի ամրապնդման նպատակով պայմանավորում էին երկրի սոցիալ-տնտեսական արագ զարգացման ձախողումը: Այդ ձախողման պատճառն էր հանդիսանում նաև երկրի ռազմականացման քաղաքականությունը:

<u>Չորրորդ ենթաբաժնում՝</u> «Նավթի ազդեցությունը Իրանի և ԱՄՆ-ի հարաբերությունների զարգացման վրա 1970-ական թթ. երկրորդ կեսին» լուսաբանվում են շահական վարչակարգի ներքին և արտաքին քաղաքականության առանձնահատկությունները և հատկապես ԱՄՆ-ի հետ տնտեսա-քաղաքական հարաբերությունների սերտացումը:

1970-ական թթ. սկզբին նավթի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով ԱՄՆ-ի ղեկավար շրջանները և նավթային տրեստերը սկսում են մշակել զավթողական քաղաքականության ծրագրեր, որոնք հիմնված էին Մերձավոր և

Միջին Արևելյան տարածաշրջանի նավթին «երաշխավորված հասանելիության» դոկտրինի վրա: ԱՄՆ-ի նպատակն էր պահպանել Մերձավոր ու Միջին Արևելքի նավթին հասանելիությունը՝ խելամիտ գներով և երկրի պահանջներին համապատասխան: ԱՄՆ-ը ջանում էր Իրանի հետ սերտ հարաբերություններ հաստատել, իսկ տարածաշրջանում «կայունություն» պահպանել: Վաշինգտոնը իրականացնում էր Մերձավոր Արևելյան երկրներին ԱՄՆ-ի գործընկերը դարձնելու և նրանց նավթադոլլարները կապիտալիստական և հատկապես ամերիկյան տնտեսական և տարադրամա-ֆինանսական համակարգին կապելու քաղաքականություն, որի միջոցով հետագայում կկարողանար ճնշում գործադրել այդ պետությունների վրա: ԱՄՆ-ը իր նավթային պահանջները բավարարելու փոխարեն առաջարկում էր տնտեսական համագործակցություն և զենքի վաճառք:

1970-ական թթ. սկզբից երկրի ներքին ու արտաքին որոշակի գործոնների և միջազգային հարաբերությունների զարգացման և փոխներգործության շնորհիվ Իրանը սկսում է զգալի քաղաքական դեր խաղալ Մերձավոր և Միջին Արևելյան տարածաշրջանում: Զուգահեռաբար մեծանում է Իրանի դերը ԱՄՆ-ի արտաքին քաղաքական համակարգում, ընդ որում, այն պահանջներն ու շահերը, որոնք պայմանավորում էին ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում համընկնում էին Իրանի պահանջներին ու հավակնություններին, ինչը նպաստում էր այդ երկու երկրների հարաբերությունների սերտացմանը:

1960-ական թթ. վերջին ԱՄՆ-ի նախագահ Լ. Ջոնսոնը խրախուսեց Իրանին զենք վաճառելու շահի ձգտումը՝ այդ քաղաքականության իրագործման հարցում խոստանալով ամերիկյան դեկավար շրջանների հովանավորությունը: Իսկ 1972թ. Ռ. Նիքսոնը համաձայնություն տվեց Իրանին վաճառել ԱՄՆ-ի զինանոցի ցանկացած տեսակի ժամանակակից զենք ու զինամթերք, բացի ատոմայինից: Եվ, եթե 1965-1974թթ. Իրանի ԱՄՆ-ից ներմուծվող զենքի ու զինամթերքի ծախսերը կազմեցին $1.4 մլրդ, ապա 1974-1975թթ. այդ նպատակի համար հատկացվեց $5.52մլրդ, իսկ 1975-1976թթ.՝ $7.9մլրդ: Երկրի կողմից գնված ռազմական տեխնիկայի որոշ տեսակների, ինչպես օրինակ «Թոմքեթ» F-14 ծովային ուժերի կործանիչը, չկային նույնիսկ ՆԱՏՕ-ի եվրոպական անդամների սպառազինության մեջ:



Այս քաղաքականության հետևանքով Իրանը ԱՄՆ-ի համար դարձել էր ոչ միայն «կայունության կղզի», ինչպես այն անվանում էր նախագահ Ջ. Քարտերը, այլև ամերիկյան դիրքերի «կայունության հենարանը» և «անվտանգության խորհրդանիշը» Միջին Արևելքում:

Այսպիսով, 1973թ.-ից հետո Իրանի արտաքին և ռազմական քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նավթային աննախադեպ եկամուտների պայմաններում Մոհամմեդ Ռեզա շահը սկզբում վարում էր քիչ թե շատ ինքնուրույն քաղաքականություն: Երկրի տնտեսական զարգացման համար նա դիմեց արտաքին աշխարհի հետ տնտեսա-քաղաքական հարաբերությունների զարգացմանը: Սակայն իր արևմտամետ քաղաքականության հետևանքով նա, այնուամենայնիվ, նախընտրեց ԱՄՆ-ի հետ ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսա-քաղաքական սերտ համագործակցությունը: Խրախուսելով գերժամանակակից զենք ու զինամթերք ունենալու շահի ցանկությունները և հովանավորելով նրա հեգեմոն ձգտումները՝ ԱՄՆ-ը նրա վրա ազդեցություն գործելու արդյունավետ գործիք ձեռք բերեց:

<u>Հինգերորդ ենթաբաժինը</u>՝ «Նավթը և հեղափոխությունը» ուսումնասիրում է նավթային եկամուտների նշանակությունը երկրում հեղափոխական իրադրության ձևավորման գործում:

Իրանի նավթային եկամուտները մի կողմից նպաստելով կապիտալիստական հարաբերությունների արագացված զարգացմանը՝ առաջացնում էին սոցիալական և քաղաքական լուրջ հակասություններ, իսկ մյուս կողմից ֆինանսական այդ մեծ կարողությունները և մեծ բանակը շահին ստիպում էին ավելի քիչ ուշադրություն դարձնել երկրի ցածր խավերի և գյուղացիության սոցիալական ծանր վիճակին: Դրանով է բացատրվում այն փաստը, որ դեռևս 1950-60ական թթ. իշխանությունները հասկանում էին գյուղերում կիսաֆեոդալական հարաբերությունների պահպանման վտանգը, սակայն 1970-ական թթ. կեսերից նրանք սկսեցին անտեսել այնտեղ ստեղծված ճգնաժամային իրավիճակը, ուր կապիտալիզմի արագ զարգացման պայմաններում հաճախակիացավ գյուղական տնտեսությունների լիովին սնանկացումը, ինչի հետևանքով գյուղատնտեսություն սկսեց անշահութաբեր

զբաղմունք համարվել: Հետևաբար ծանրացավ նաև գյուղացիության սոցիալական վիճակը, ինչը գյուղից քաղաք մեծաքանակ միգրացիայի պատճառ դարձավ:

Երկրի աննախադեպ նավթային եկամուտները հիմնականում ծախսվում էին շահական վարչակարգի կողմից կառավարվող պետական սեկտորի, և բյուրոկրատական բուրժուազիայի դիրքերի ամրապնդմանը: Բացի դրանից, երկրի եկամուտները ծառայում էին արևմտյան խոշոր ընկերությունների շահերին, որոնցից կատարվում էր տարբեր տեսակի տեխնոլոգիաների, արդյունաբերական սարքավորումների, ռազմական տեխնիկայի և զենքի ներմուծում՝ առանց հաշվի առնելու երկրի իրական հնարավորությունները, պահանջները և պետական շահերը:

Իրանի ղեկավար շրջանների վարած քաղաքականության հետևանքով նավթային աննախադեպ եկամուտների ժամանակաշրջանը Իրանի հասարակության համար հանդիսացավ սոցիալ-քաղաքական ճգնաժամի և հեղափոխական իրավիճակի ստեղծման նախաշեմը:

Այսպիսով, ճգնաժամային վիճակը, որը վերածվեց հեղափոխության, ձևավորվել էր դեռևս 1970-ական թթ. երկրորդ կեսից: Այդ իրավիճակի ստեղծման վրա մեծ ազդեցություն էին գործել սոցիալ-տնտեսական և քաղաքական հակասությունները, որոնք առաջացել էին Իրանում միապետական կարգերի պահպանման պայմաններում արագացված կապիտալիստական ուղիով զարգացման և հասարակական կյանքի ժամանակակից ու ավանդական ձևերի հակասությունների հետևանքներով:

ԵԶՐԱՓԱԿՄԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, հեղինակը եզրակացնում է.

- Նավթի հետ կապված խնդիրները, սկսած Անգլո-իրանական նավթային ընկերության ստեղծումից, սերտորեն կապված են եղել Իրանի տնտեսական, քաղաքական կյանքի հետ: Այդ կապը հատուկ նշանակություն ստացավ, երբ նավթից ստացվող եկամուտը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման գլխավոր միջոցը դարձավ: Իրանում ստեղծված խոշոր նավթարդյունաբերությունը երկար տարիներ որպես գործիք ծառայեց Մեծ Բրիտանիայի ձեռքում՝ երկրի սոցիալ տնտեսական և քաղաքական հարցերում որոշիչ դեր խաղալու համար: 1940թթ.



վերջին և 1950-ական թթ. սկզբին Իրանի ժողովրդավարական ուժերը հանդես եկան երկրի նավթարդյունաբերության նկատմամբ օտարերկրյա գերիշխանության վերացման և նրա երկրի ազգային տնտեսության ինտեգրման համար: Սակայն, շահական վարչակարգի արևմտամետ քաղաքականության և ազգային բուրժուազիայի անհետևողական քաղաքականության հետևանքով այդ շարժումը պարտություն կրեց:

- 1954թ. ՄԵԿ-ի ստեղծումից հետո ճանապարհ հարթվեց արևմտյան նավթային ընկերությունների և նրանց կառավարությունների կողմից իրանական նավթի շահագործման համար: Արևմուտքի մենաշնորհային կապիտալին կրկին հաջողվեց վերահսկողություն հաստատել Իրանի նավթի վրա: Միաժամանակ արևմտյան խոշոր նավթային ընկերությունները, իրենց եկամուտները ավելացնելու նպատակով մեծացրեցին իրանական նավթի արդյունահանումն ու արտահանումը, ինչը նպաստեց Իրանի պետական եկամուտների աճին:

- 1960-1970 թթ. նավթի և նրա եկամուտների ազդեցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա զգալիորեն մեծացավ: Նավթարդյունաբերության և հասարակական զարգացման փոխադարձ կապը ավելի ամրապնդվեց երկրում նավթի եկամուտների միջոցով արդյունաբերական զարգացման ծրագրերի իրականացման հետևանքով:

- Նավթային եկամուտները կարևոր դեր խաղացին Իրանի քաղաքական դիրքերի ամրապնդման և արտաքին քաղաքական կուրսի ձևավորման գործում, նպաստելով նրա հեղինակության բարձրացմանը: Հատկանշական է հարաբերությունների սերտացումը ԱՄՆ-ի հետ, որը, ցանկանալով Իրանը տեսնել որպես իր հենարանը տարածաշրջանում և Պարսից ծոցում հսկիչ-պահապանի դերում՝ վերջինին վաճառում էին գերժամանակակից զենք ու զինամթերք, որոնցից չունեին նույնիսկ ՆԱՏՕ-ի զորքերը:

- Իրանի արտադրողական ուժերի զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 1970-ական թթ. սկզբներին նավթային եկամուտների կտրուկ աճի պայմաններում, երբ երկիրը սկսեց նավթից տարեկան ստանալ մինչև $20մլրդ: Իրանը ոտք դրեց արագ ինդուստրացման ուղին: Սակայն երկրի ղեկավար

շրջանները այդ աննախադեպ ֆինանսական միջոցները չկարողացան նպաստավոր օգտագործել երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման համար: Շահական վարչակարգը իր իշխանության գրավականը համարելով երկրի ռազմականացումը, նավթային եկամուտների մեծ մասը սկսեց հատկացնել ժամանակակից զենքի ու զինամթերքի ձեռքբերմանը: Նավթային եկամուտները նաև մեծապես նպաստում էին պետական սեկտորի ամրապնդմանը և նրա սոցիալ-քաղաքական գործառույթների ընդլայնմանը:

- Պետական սեկտորի խոշոր ֆինանսա-տնտեսական պոտենցիալի օգնությամբ երկրի իշխանությունները նպաստում էին մոնոպոլիստական արդյունաբերական և բանկային կառույցների ստեղծմանը, որոնք պատկանում էին իրանական մասնավոր կապիտալին: Պետական և խոշոր մասնավոր սեկտորի հիմնական գործընկերն էին հանդիսանում հզոր արևմտյան ընկերությունները, որոնց գործունեությունը երկրում առավել ընդլայնվեց նավթային բումից հետո:

- Երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող ինդուստրացման ծրագիրը, որի հիմքն էր կազմում նավթաքիմիայի, մետալուրգիայի և մեքենաշինության ստեղծումը լիովին չէին համադրվում արտադրական և ենթակառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտության հետ, առանց որոնց այդ ծրագրերը իրագործելի չէին կարող լինել: Հատկանշական է, որ ծրագրերի իրականացման հատուկ ռազմավարություն չէր մշակվում, իսկ երկրի կախվածությունը Արևմուտքի տնտեսական համակարգից այդ նպատակների իրագործումը անհնարին էին դարձնում: Նավթային աննախադեպ եկամուտների պայմաններում Իրանը մի քանի անգամ մեծացրեց տարբեր տեսակի ապրանքների ներմուծման չափերը, որի հետևանքով երկրում մեծ չափերի հասավ դրամի արժեզրկումը:

- Իրանի ղեկավար շրջանները ձգտում էին ամրապնդել պետական սեկտորի և խոշոր մասնավոր կապիտալի դիրքերը, ինչի հետևանքով վատթարանում էր միջին և ցածր խավի վիճակը: Առաջացավ սոցիալական բևեռացում, որը առավել մեծացավ նավթային «բումի» ժամանակ և հանգեցրեց հարուստների և աղքատների միջև հակասությունների սրմանը: Հենց այդ հակասություններն էլ սոցիալական առումով



որոշիչ դեր խաղացին 1970-ական թթ. հեղափոխական իրադրության ստեղծման հարցում:

- Իրանը 1974-1978թթ. ընկած ժամանակահատվածում նավթից ստացել է մոտավորապես $108 մլրդ. եկամուտ, որի ռացիոնալ օգտագործումը Իրանին ոչ միայն հնարավորություն կտար արդյունաբերության ամուր հիմքեր դնել, այլև լուծել երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային խնդիրները: Սակայն շահական վարչակարգի քաղաքականության հետևանքով երկրի ներքին խնդիրները ավելի սրվեցին: Լայն տարածում ստացած դրամի արժեզրկումը, քաղաքային բնակչության նյութական վիճակի վատթարացումը, նրանց ազատության սահմանափակումները, դասակարգային հակասությունները, տնտեսական դժվարությունները նպաստեցին երկրում հեղափոխական իրադրության ստեղծմանը, և քանի որ Մոհամմեդ Ռեզա շահը ժողովրդի համար հանդիսանում էր սոցիալական ու քաղաքական անիրավության, երկրում ամերիկյան և, ընդհանրապես, արևմտյան ազդեցության տարածման հիմնական մեղավոր, ապա հեղափոխությունը ուղղվեց հենց նրա դեմ:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումները


1. Նավթը և Իրանի տնտեսական ու քաղաքական զարգացումները 1970-ական թվականներին, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքակրթություն, մշակույթ, հ., II Եր., 2005, էջ 98-101:
2. Միջազգային Նավթային կոնսորցիումի գործունեությունը Իրանում 1950-ական թվականներին, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքակրթություն, մշակույթ, հ., III Եր., 2006, էջ 62-66:
3. ՕՊԵԿ-ը և Իրանի կառավարության նավթային քաղաքականությունը 1960-1970թթ, Կանթեղ, 2(31), Եր., 2007, էջ 133-141:

ХАЧАТУРЯН АЛЬБЕРТ КАРЕНОВИЧ

НЕФТЬ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ И ПОЛИТИЧЕСКОЕ РАЗВИТИЕ ИРАНА В 1954-1979гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – "Всемирная История".
Защита состоится 8 июня 2007г. в 15:00 часов на заседании специализированного совета 006 по адресу: 0019, г Ереван, проспект Маршала Баграмяна 24г., Институт востоковедения НАН РА.

## РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению роли нефти в социально-экономическом и политическом развитии Ирана в 1954-1979 годах. Всестороннее изучение вопросов, касающихся этого периода истории Ирана, вызвано необходимостью полного исследования роли нефти в социально – политической жизни Ирана, выявления значения нефтяного фактора, обусловившего проникновение Западных государств в экономику и политику страны.

Исследование данной темы имеет чрезвычайно важное значение, ввиду того, что одной из главных задач иранской революции, было освобождение страны от засилья транснациональных корпораций (ТНК) и ликвидации экономической зависимости Ирана от США и других индустриально – развитых держав, явившихся следствием избранного шахом курса развития в 70-х годах, в период нефтяного бума.

Наиболее рельефно задача экономического и политического развития Ирана выступает, если рассматривать ее в контексте проблем нефти, особенно в период, когда нефть стала основой иранской экономики и когда зависимость социального и экономического развития от нефтяных доходов стала чрезмерной.

Нефтяной вопрос как бы сфокусировал в себе многие сложные проблемы и противоречивые тенденции общественно-политического и экономического развития Ирана, особенно в период 1954-1979гг.

Совершенно особую роль нефтяной фактор сыграл в создании экономических и социально-политических предпосылок Исламской Революции Ирана 1978-1979гг. Без



всестороннего анализа основных компонентов политики, которую проводил шахский режим для абсорбирования огромного потока поступавших в его распоряжение нефтедолларов после 1973г., понять иранскую революцию невозможно.

Тема диссертации не становилась предметом отдельного исследования, хотя ее различные аспекты освещались в армянской и зарубежной историографии.

По содержанию и структуре данная работа является первым подобным исследованием в армянском востоковедении.

Диссертация состоит из предисловия, трех глав (каждая из которых содержит разделы) , заключения, списка использованных источников и научной литературы.

В предисловии обосновывается актуалность и важность темы диссертации, формулируются ее цели и задачи, научная новизна и теоретическое и практическое значение. В иследовании также дается краткий обзор использованных источников и литературы, раскрываются методологические основы исследования.

В первой главе диссертации ("Международный нефтяной консорциум и экономическо-политическое развитие Ирана в 1950-х годах") рассматриваетса создание и деятельность МНК в Иране 1950-х годах, и проникновение Западных держав в политику и экономику страны. Обсуждается также значение нефтяных доходов на экономику страны.

Вторая глава ("Нефтяной фактор в развитии экономической и политической жизни Ирана в 1960-1970гг.") посвящена изучению увеличения влияния нефти на экономическое и политическое развитие Ирана в 1960-1970гг., а также политике Ирана в Персидском заливе по вопросу раздела континентального шельфа и создания организации стран экспортеров нефти-ОПЕК, а также участия Ирана в деятельности организации.

В третьей главе ("Влияние увеличения цен нефти на политику и экономику Ирана в 1970-х гг.") исследуются нефтяной кризис создавшийся вследствие арабо-израильского конфликта 1973г., четырехкратное повышение цен на нефть странами ОПЕК, и влияние возросших доходов на политическое и экономическое развитие Ирана.

В этой главе рассматриваются также вопросы внутренней и внешней политики страны и экономическо-политическое сотрудничество Ирана с США, а также влияние нефтяных доходов на формирование революционной ситуации в стране.

В заключении диссертации представлены основные выводы по рассмотренным в работе проблемам.

ALBERT K. KHACHATURYAN

OIL AND SOCIAL-ECONOMIC AND POLITICAL DEVELOPMENT IN 1954-1979's.